ԷԳԵՅԱՆ ԿՂԶԻՆԵՐԸ ԵՎ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՏԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ (1912—1914)

Գ. Ս. ՔԻԼԻՄՋՅԱՆ

Բալկանյան պատերազմներում Օսմանյան կայսրությունը պարտվեց և հիմնականում կորցրեց իր եվրոպական տիրույթները։ Թուրքական տիրապետությունը վերացավ նաև Էգեյան ծովի այն կղզիներում, որոնք գրավվել էին հունական ռազմա-ծովային ուժերով։ Դա լուրջ տագնապ առաջացրեց Թուրքիայի կառավարող շրջաններում, որոնց առաջին հերթին մտահոգում էր նեղուցների ու Փոքրասիական ափագծի անվտանգությունը ապահովող կղզիների ճակատագիրը։

Մյուս կողմից, Բալկաններում ստեղծված իրավիճակը անմիջականորեն շոշափում էր նաև իմպերիալիստական տերությունների ռազմա-քաղաքական ու տնտեսական շահերը։ Ուստի, Թուրք-բալկանյան կոնֆլիկտում նրանք հանդես եկան եռանդուն միջամտությամբ։ Նրա կարգավորման պատրվակով պատերազմող կողմերին պարտադրելով իրենց շահերին համապատասխան որոշումներ։ Այդ նպատակով 1912 թ. դեկտեմբերին Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի և Ռուսաստանի դեսպանները Լոնդոնում գումարեցին կոնֆերանս, քննարկելով պատերազմի հետևանքով առաջացած հրատապ խնդիրները, որոնց թվում էր նաև Էգեյան ծովի կղզիների ապագան։ Դրանով հիշյալ տերությունները հետապնդում էին Արևելյան Միջերկրականում իրենց ազդեցությունը ուժեղացնելու նպատակ։ Խնդիրն, ի վերջո, առնչվում էր Հունաստանի և Օսմանյան կայսրության նկատմամբ մեծ տերությունների վարած քաղաքականության, ինչպես նաև՝ նեղուցների ու ռազմա-ստրատեգիական նշանակություն ունեցող կղզիների հարցի հետ։ Դրան առավել բարդություն էր տալիս այն, որ Իտալիան 1911—1912 թթ. Թուրքիայից գրավելով Դոդեկանեզյան արշիպելագը, հավակնում էր գրանցում հաստատվել և իր ազդեցությունը տարածել ոչ միայն Արևելյան Միջերկրականում, այլև՝ Արևմտյան Անատոլիայում։

Ռուսական դիվանագիտությունը չէր կարող անտարբերությամբ վերաբերվել Էգեյան ծովի կղզիները Հունաստանի տիրապետության տակ անցնելու փաստին։ Նրան առաջին հերթին անհանգստացնում էր Էգեյան ծովում Հունաստանի գերիշխանության հաստատման հեռանկարը, որը կարող էր սպառնալ նեղուցների անվտանգությանը։ «Այն օրը, երբ Էգեյան ծովում հույները ունենան տաս տրեդնոուդ, ապա ի՞նչ արժեք կունենա նեղուցների ազատությունը» —իր տագնապն էր արտահայտել ռուսական կայսրության արտաքին գործերի մինիստր Սազոնովը[1]։

Էգեյան ծովում Հունաստանի, հետևաբար՝ Անգլիայի գերիշխանության հաստատման հեռանկարը Սազոնովին ստիպում էր հանդես գալու բոլոր կղզի-

---

[1] Documentes diplomatiques Français ralatifs aux origines de la guerre de 1914. (այսուհետև՝ D. D. F.), 3-ème série (1911—1914). Paris, 1929—1936. t. VIII, p. 175.

ները Օսմանյան կայսրության կազմում պահելու ձգտումով։ Ուստի Բալկանյան պատերազմի սկզբում Սազոնովը հայտարարեց, որ Հունաստանը կստանա Կրետեն «բայց ուրիշ և ոչ մեկ կղզի»[2]։ Սակայն, երբ հունական նավատորմը գրավեց կղզիները, Սազոնովը սկսեց որոնել նեղուցների անվտանգությունը ապահովող լուծում։

Այդ առումով, առաջին պլանի վրա էր դրվում Իմբրոս, Լեմնոս, Թենեդոս և Սամոթրակիա կղզիների պատկանելության հարցը, որոնք իրենց աշխարհագրական դիրքով և ռազմա-ստրատեգիական նշանակությամբ կապվում են նեղուցների հետ։ Չափազանց բարձր գնահատելով այդ կղզիների դերը նեղուցների պաշտպանության գործում, ռուսական դիվանագիտությունն առաջարկում էր դրանք թողնել Թուրքիայի կազմում։ Պետերբուրգում համոզված էին, որ այդ կղզիները հետամնաց և թույլ Թուրքիայի ձեռքում չեն կարող Ռուսաստանի համար էական սպառնալիք ստեղծել, այնինչ դրանց անցումը մեկ այլ պետության նեղուցների անվտանգության առումով, հարված կհասցներ իրենց շահերին[3]։ Ուստի, վերոհիշյալ կղզիների անցումը Հունաստանին ռուսական դիվանագիտությունը համարում էր միանգամայն անընդունելի «որովհետև դրանք իրենցից ներկայացնում են Դարդանելի մուտքը շրջափակող բանալի»[4]։

Նեղուցների համար մղվող պայքարը Մերձավոր Արևելքում ռուսական քաղաքականության հիմնական հարցն էր։ Ռուսական իմպերիալիզմի համոզմամբ նեղուցների խնդրի միակ արմատական լուծումը կայանում էր դրանք անմիջականորեն գրավելու մեջ։ Ուրեմն, նեղուցների անվտանգությունը ապահովելու համար Ռուսաստանը պետք է գրավեր նաև հարակից կղզիները։ Ահա այս էր Պետերբուրգում տիրող տեսակետը[5]։

Նման դիտավորությունն, անշուշտ, գաղտնիք չէր, և մյուս տերությունները աչալուրջ հետևում էին Ռուսաստանի յուրաքանչյուր քայլին։

Ֆրանսիան հանդես էր գալիս էգեյան ծովի բոլոր կղզիները հունական ճանաչելու ծրագրով։ Այդ վերաբերում էր նաև Դոդեկանեզյան արշիպելագին, որը գրավել էին իտալացիները։

Նման մոտեցումը բխում էր ոչ թե կղզիների բնակչության ազգային պատկանելության սկզբունքից, այլ՝ Արևելյան Միջերկրականում ու Լևանտի երկրներում ֆրանսիական շահերը պաշտպանելու քաղաքականությունից[6]։ Բացի այդ, Իտալիան նույակ դաշինքի անդամ էր և այդ հանգամանքը Փարիզում գնահատվում էր որպես լուրջ վտանգ։ Այդպիսով, էգեյան ծովի բոլոր կղզիները հունական ճանաչելու համառ ձգտման տակ թաքնված էր շատ կարևոր պատճառ. «Հունաստանի կապակցությամբ գրված խնդիրը ավելի քան կարևոր է,—գրում էր Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրը։ Դա վերաբերում է Միջերկրականում մեր անվտանգությանը»[7]։

Այդպիսով, էգեյան կղզիների խնդիրը ֆրանսիական կառավարության

---

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, հ. 5, էջ 299։

4 Центральный Государственный архив Военно-морского флота, ф. 418, оп. 1, д. 2936, л. 28.

5 История дипломатии, т. II, М., 1963, стр. 761.

6 D. D. F., t. v. p. 85.

7 Նույն տեղում, հ. 7, էջ 540։

համար անմիջականորեն Ֆրանսիայի պետական շահերը շոշափող հարց էր։ Արտաքինից թվում էր, թե Ֆրանսիան պաշտպանում էր հունական կառավարության շահերը, այնինչ, Ֆրանսիան ձգտում էր կանխել իտալական էքսպանսիան Արևելյան Միջերկրականում և Կանտոնում, Հունաստանին դիտելով Իտալիային հակազդող ուժ։ Հունաստանը մրցման մեջ էր մտնելու իտալական բուրժուազիայի հետ, վարձելով կամ՝ նվաճելով նրա տնտեսական գործունեությունը տվյալ շրջանում[8]։

Էգեյան կղզիները Թուրքիային կամ Հունաստանին պատկանելու հարցում Անգլիան հետապնդում էր Դոդեկանեզյան արշիպելագից Իտալիային հեռացնելու նպատակը։ «Անգլիան, հավանաբար, ավելի քան՝ մենք, վախենում է Արևելյան Միջերկրականի ավազանում Իտալիայի հաստատումից և փափագում է այդ կղզիների շուտափույթ էվակուացիան»,— հաղորդում էր Լոնդոնի ֆրանսիական դեսպանը[9]։ Այդ նպատակի իրականացման համար միջոց էր համարվում Դոդեկանեզը Թուրքիային վերադարձնելը[10] և արշիպելագի բնակիչներին լայն ինքնավարություն շնորհելը[11]։

Գերմանիայի կառավարող շրջաններում Էգեյան ծովի կղզիների խնդրում գոյություն ուներ երկու տեսակետ։ Արտաքին գործերի մինիստրության պատասխանատու աշխատողները Թուրքիային դիտելով որպես ապագա պատերազմում իրենց դաշնակից, հանդես էին գալիս նրա շահերի պաշտպանությամբ։ Մյուս հոսանքը, կայսրի գլխավորությամբ, ենթադրում էր, որ Գերմանիան ունի ազդեցության բավականաչափ միջոցներ ու լծակներ, որոնցով կկարողանա Թուրքիային թեքել իր կողմը։ Ուստի, կղզիների հարցում պաշտպանելով Հունաստանին, նրանք աշխատում էին վերջինիս ներգրավել Եռյակ դաշինքի մեջ։ Դա իր արտացոլումը գտավ կղզիների հարցի քննարկման ընթացքում[12]։

Գերմանական կառավարությունը հանդես էր գալիս Իմբրոս, Լեմնոս, Թենեդոս և Մամոթրակիա կղզիները Թուրքիայից անջատելու ձգտումների դեմ, համոզված լինելով, որ այդ կղզիներում օտար տիրապետության հաստատման դեպքում վտանգի կենթարկվի նեղուցների անվտանգությունը։ Սակայն, ի տարբերություն ռուսական առաջարկի, Բեռլինը համաձայն էր հիշյալ կղզիներին ինքնավարություն շնորհելուն[13]։

Քննարկվող խնդրում յուրահատուկ էր իտալական կառավարության դիրքավորումը։ Նա շատ լավ էր ըմբռնում, որ բոլոր կղզիները հունական ճանաչելու առաջարկի ներքո թաքնված է Արևելյան Միջերկրականում Իտալիայի ազդեցությունը վերացնելու Անգլիայի ու Ֆրանսիայի մտադրությունը։ Այստեղից էլ բխում էր այն համառ դիմադրությունը, որ ցուցաբերում էր Իտալիան կղզիները հունական ճանաչելու գործում։

Համագործակցելով Թուրքիայի հետ, որպես փոխհատուցում, Իտալիան վոնցեսիաներ էր պահանջում Արևմտյան Անատոլիայում, մասնավորա-

---

8 Նույն տեղում, էջ 540։

9 Նույն տեղում, էջ 596։

10 Նույն տեղում, հ. 8, էջ 30։

11 Նույն տեղում, էջ 776։

12 А. С. Аветян, Германский империализм на Ближнем Востоке, М., 1966, стр. 47—48.

13 D. D. F., t. V, p. 108.

պես՝ Ադալիա-Այդին երկաթուղագիծը կառուցելու գործում[14]։ Մյուս կողմից, իտալական կառավարությունը նշում էր, որ Դոդեկանեզը Թուրքիային վերադարձնելու դեպքում ինքը հենակետ է պահանջելու Ադալիայի ծոցում[15]։ Դրանից բացի, Իտալիան պահանջներ էր ներկայացնում Փոքր Ասիայում և Դոդեկանեզում, մասնավորապես՝ վերջինի տեղական ժանդարմերիայի և վարչական մարմինների կառավարման գործում[16]։

Ավստրո-հունգարական կառավարությունը կղզիների հարցում հետևում էր Գերմանիային ու Իտալիային։

Այսպիսին էին կղզիների խնդրի լուծման գործում իմպերիալիստական տերությունների տեսակետները։

Էգեյան կղզիների խնդրի շուրջ բուռն վիճաբանություններ սկսվեցին դեսպանաժողովի առաջին իսկ նիստում։ Հանդես գալով որոշ կղզիներ Թուրքիային թողնելու առաջարկների դեմ, ֆրանսիական դեսպան Պոլ Կամբոնը հայտարարեց, որ իր վարչությունը ոչ մի առարկություն չունի ամբողջ կղզիները Հունաստանին զիջելու գործում։ Այնուհանդերձ, նա նշեց, որ եթե ռուսական կառավարությունը ցանկանում է որոշ վերապահումներ կատարել այդ հարցում, ապա կարելի է ապառազմականացնել նեղուցներին կից կղզիները[17]։

Ֆրանսիական առաջարկին հավանություն տվեց դեսպանաժողովի նախագահ, Անգլիայի արտաքին գործերի մինիստր Էդ. Գրեյը։ Նա նաև առաջարկեց ապառազմականացման սկզբունքը տարածել Էգեյան ծովի բոլոր կղզիների վրա[18]։ Դա համապատասխանում էր բոլոր մեծ տերությունների շահերին, քանի որ փոխադարձորեն կչեղոքացներ Էգեյան ծովում ռազմավարական ներ փնտրող յուրաքանչյուր տերության հնարավոր փորձերը։ Այդ է պատճառը, որ դեռևս սկզբունքորեն չլուծելով կղզիների հետագա ճակատագիրը, նրանք կանխարգելում էին միմյանց ագրեսիվ նպատակները։

1913 թ. հունվարի 2-ին, հակասությունների և փոխադարձ անվստահության մթնոլորտում, իմպերիալիստական տերությունների դեսպանները կրկին անդրադարձան Էգեյան կղզիներին։ Ռուսական դեսպան Բենկենդորֆը ներկայացրեց իր կառավարության նոր առաջարկությունը, որովհետև նախկինը հանդիպել էր Ֆրանսիայի առարկությանը, ինչպես նաև հույներին տրամադրել ռուսական կառավարության դեմ[19]։ Ելնելով ստեղծված իրադրությունից, Սազոնովը ստիպված էր համաձայնվել Էգեյան ծովի բոլոր կղզիները Հունաստանի հետ միավորելու գաղափարին։ Սակայն նա պարտան էր դնում, որ Դարդանելի շրջանում գտնվող չորս կղզիները պետք է ապառազմականացվեն, ռազմա-ստրատեգիական նպատակներով երբեք չօգտագործվեն և չտրամադրվեն այլ տերության[20]։

Այդպիսով, Ռուսաստանը միացավ Էգեյան ծովի բոլոր կղզիները Հունաստանին զիջելու Ֆրանսիայի տեսակետին։ Դրանով ամրացավ Եռյակ համաձայնության քաղաքականությունը, որը հետապնդում էր Միջերկրական

---

14 Նույն տեղում, հ. 8, էջ 639։
15 Նույն տեղում, հ. 7, էջ 632։
16 Նույն տեղում, հ. 8, էջ 790։
17 Նույն տեղում, հ. 5, էջ 103։
18 Նույն տեղում։
19 Նույն տեղում, էջ 183։
20 Նույն տեղում։

ծովի արևելյան շրջանը իտալական ազդեցությունից վերացնելու նպատակը։ Ֆրանսիայի պրեզիդենտ Պուանկարեն, ոգևորված այդ միասնությունից, գրեց. «Ես խորին գոհունակությամբ եմ դիտում այն փաստը, որ կղզիները Հունաստանին զիջելու խնդրում միասնական տեսակետ գոյություն ունի Գրեյի, Ռուսաստանի և մեր միջև»[21]։ Այդ միասնությունը գլխավորապես էր այն հանգամանքի, որ մղվում էր այդ շրջանում հաստատվելու ջանքեր գործադրող Եռյակ դաշինքի համախմբավորար թույլ անդամի դեմ. «Իտալիայի գաղտնի դիտավորությունը չի կարող չամրապնդել մեր տեսակետը», —եզրափակում էր Պուանկարեն[22]։

Այժմ արդեն Գրեյը որոշեց հստակորեն ձևակերպել և վերջնական դարձնել կղզիները Հունաստանին զիջելու առաջարկը։ Սակայն արդյո՞ք հակառակ խմբավորման տերությունները համամիտ կլինեին դրան։ Հույս էր ներշնչում գերմանական դեսպան Լիխնովսկու հունվարի 2-ի նիստում արած հայտարարությունը, որ էգեյան ծովի կղզիների խնդրում իր կառավարության շահագրգռվածությունը կրում է սոսկ երկրորդական բնույթ։ Ուստի, նա պատրաստ էր միանալու այդ առթիվ կայացած տերությունների ամեն որոշմանը[23]։ Իսկ իտալական դեսպանը շարունակում էր հանդես գալ դիտորդի դերում, պատրվակելով, որ ինքը դեռևս չունի համապատասխան հրահանգներ։

Վերջապես, հունվարի 4-ին Գրեյը առաջարկեց ընդունել հետևյալ որոշումը. Թուրքիան պարտավորվում է լքել էգեյան ծովի բոլոր կղզիները և դաշնակիցները այդ կետում նույնպես պետք է բավարարություն ստանան, ինչպես և մնացյալ պահանջներում[24]։

Թուրքիային հանգստացնելու համար նշվում էր, որ տերությունները ջանքեր կգործադրեն ռազմա-ստրատեգիական նշանակություն ունեցող կղզիներում ստեղծել այնպիսի վարչություն, որը ենթակա լինելով ապառազմականացման պայմանին, կբացառի Թուրքիային սպառնալիք ստեղծելու հնարավորությունը։

Սակայն Իտալիան կտրականապես առարկեց հարցի այդօրինակ լուծմանը, նշելով, որ «բոլոր տերությունները իրենց հավանությունը չեն արտահայտել էգեյան կղզիները Հունաստանին հանձնելու վերաբերյալ, ուստի և տերությունների համաձայնությունը այդ որոշման կապակցությամբ չի կարելի ընդունված համարել»[25]։ Արդյունքում, Իտալիան բացահայտորեն հրաժարվեց Դոդեկանեզյան արշիպելագը թողնելու Եռյակ համաձայնության անուղղակի պահանջը, որ նա հույս ուներ պահել՝ հենվելով իր դաշնակիցների աջակցության վրա։

Կղզիների հարցում իր վերաբերմունքը փոխեց նաև գերմանական կառավարությունը։ Հունվարի 6-ին Լիխնովսկին նշեց, որ «արդարություն ու չեզոքության սկզբունքը» հակառակ է Ադրիանուպոլիսն ու բոլոր կղզիները Թուրքիայից վերցնելու գաղափարին։ Նրա կարծիքով, թուրքական կառավարությունը եթե Ադրիանուպոլիսի հարցում զիջեր, ապա անհրաժեշտ կլիներ նրան թողնել Դարդանելի շրջանի կղզիները, ինչպես նաև՝ Քիոսն ու Միթիլենը[26]։

21 Նույն տեղում, էջ 235։
22 Նույն տեղում։
23 Նույն տեղում, էջ 188։
24 Նույն տեղում, էջ 195, 199։
25 Նույն տեղում։
26 Նույն տեղում, էջ 233։

Գերմանական կառավարության նման շրջադարձը հետևանք էր մերձավորարևելյան քաղաքական կուրսի այն փոփոխման, որ տեղի ունեցավ Կիզևլենի մահվանից (31. XII. 1912) անմիջապես հետո։ Գերմանիայի պետական նոր քարտուղար Յոն Յագովը և նրա կողմնակիցները պաշտպանում էին Թուրքիայի ամբողջականությունը պահպանելու և նրա հետ համագործակցելու տեսակետը։ «Առանձնապես ղգալի է Արևելքի խնդիրների հանդեպ կիրառվող քաղաքականության փոփոխությունը»[27], — հունվարի 20-ին հաղորդեց Գերմանիայում ֆրանսիական դեսպան Ժյուլ Կամբոնը։

Այսպիսով, Եոյակ համաձայնության տերությունները հանդես էին գալիս էգեյան ծովի բոլոր կղզիները Հունաստանին հանձնելու առաջարկով, դրանով հետապնդելով Իտալիային Արևելյան Միջերկրականից հեռացնելու և այնտեղ իրենց անմիջական ազդեցությունը հաստատելու նպատակ։

Հակառակ խմբավորումը կտրականապես հրաժարվում էր միանալ Անտանտի տեսակետին։ Դրանում Իտալիան տեսնում էր Դոդեկանեզը թողնելու վտանգը՝ իր բոլոր հետևանքներով։ Իսկ գերմանական իմպերիալիզմը վճռականորեն հանդես էր գալիս իր պոտենցիալ դաշնակցի շահերի նախանձախնդիր պաշտպանությամբ։ Այդ հակամարտությունների հետևանքով հարցը մնում էր անլուծելի։

Լոնդոնի հաշտության բանակցությունների սկզբում Սազոնովը Թուրքիային ասրառնաց, որ եթե նա հրաժարվի դաշնակիցների պահանջները բավարարելուց և ձգձգի բանակցությունները և կամ դրանք խզվեն, ապա «Ռուսաստանի չեզոքությունը չի կարող երաշխավորվել»[28]։ Իսկ լավատեղյակ մամուլն ավելացնում էր, որ նման դեպքում Ռուսաստանը, որպես հարկադրանք, ստիպված կլինի գրավել Վանի, Բիթլիսի, Էրզրումի ու Տրապիզոնի վիլայեթները, ինչպես նաև՝ նեղուցները[29]։ Այդ սպառնալիքն անհիմն չէր։ Կովկասյան սահմանում կատարվում էին բանակային մեծ կենտրոնացումներ։ Իրադարձությունների նման ծավալումը, որն առաջ էր բերելու Փոքր Ասիան բաժանելու խնդիրը, սպառնում էր համաեվրոպական պատերազմի վտանգով։

Երջորեն ամոհանգստացած Ռուսաստանի ելույթից, Ֆրանսիան ու Անգլիան որոշեցին գործին տալ ընդհանուր բնույթ և արագացնել հաշտության պայմանների ընդունումը։ Հունվարի 4-ին Գրեյը առաջարկեց կազմակերպել տերությունների ընդհանուր ելույթ՝ դաշնակիցների պահանջները թուրքական կառավարությանը հարկադրելու նպատակով։ Անգլիայի արտաքին գործերի մինիստրի համոզմամբ, թուրքական կառավարությունը կարող էր տեղի տալ միայն բոլոր վեց տերությունների միասնական ճնշմամբ, ուստի առաջարկեց Կ. Պոլսի ջրերում ծովային ցույց կատարել[30]։

Այնուհետև, նա գտնում էր անհրաժեշտ կազմել մի հուշագիր, որտեղ պետք է նշվեր Թուրքիայի պարտավորությունը՝ անվերապահորեն դաշնակիցներին թողնելու էգեյան ծովի բոլոր կղզիները[31]։

Սակայն Եոյակ դաշինքի երկրները շարունակում էին դիմադրել բոլոր կղզիները Հունաստանին հանձնելուն։ Լիխնովսկին ընդգծեց, որ Հռոմի, Բեռ-

27 Նույն տեղում, էջ 298—299։
28 Նույն տեղում, էջ 132—133։
29 «С. Петербургские ведомости», 20.1.1913.
30 D. D. F., t. V, p. 195.
31 Նույն տեղում, էջ 199։

լինի ու Վիեննայի միջև բանակցությունների հետևանքով Եոյակ դաշինքը վերջնականապես հանգել է այն եզրակացության, որ Թուրքիային պետք է թողնվեն Դարդանելին կից կղզիները, ինչպես նաև՝ Քիոսն ու Միթիլենը[32]։

Իսկ Դոդեկանեզի հարցը Եոյակ դաշինքը շրջանցում էր, այն չհամարելով կոնֆերանսի քննարկմանը ենթակա հարց, դրանով իսկ փաստորեն ճանաչելով կղզիների իտալական օկուպացիան։

Եոյակ դաշինքի երկրները լավ էին գիտակցում, որ Էգեյան ծովի բոլոր կղզիները Հունաստանին հանձնելու դեպքում Անտանտան, մասնավորապես՝ Անգլիան ու Ֆրանսիան, իրենց լիակատար գերիշխանությունը կհաստատեն Միջերկրական ծովում և այն կվերածեին «Անգլո-ֆրանսիական լճի»[33]։ Սրանով պետք է բացատրել այն համառ դիմադրությունը, որ կղզիների հարցում դրսևորում էր Եոյակ դաշինքը։

Վերջինս կտրականապես հրաժարվեց նաև Թուրքիայի վրա ճնշում գործադրելուց. «Եվրոպան,— հայտարարեց Վիլհելմ II-ը, պետք է ձեռնպահ մնա ամեն մի միջամտությունից»[34]։

Նավային ցույցին չափազանց բացասաբար տրամադրված գերմանական կառավարությունը կարողացավ վիժեցնել Թուրքիայի վրա հարկադրանք գործադրելու ձեռնարկը և հունվարի 13-ին Գրեյը հարկադրված եղավ ետ վերցնել իր առաջարկը[35]։

Լոնդոնի դեսպանաժողովում քննարկվող հարցերի շուրջ դրսևորված Եոյակ դաշինքի վերաբերմունքը թուրքական կառավարող շրջաններում ընդունվեց խորին գոհունակությամբ։ Ի նշան երախտագիտության, Թուրքիայի արտաքին գործերի մինիստրը հունվարի 10-ին պաշտոնապես շնորհակալություն հայտնեց գերմանական կառավարությանը[36]։

Եոյակ դաշինքի աջակցությունը մեծ հույսեր ներշնչեց Թուրքիային. «Տերությունների մի խումբ ճանաչում է կղզիների վրա ունեցած մեր իրավունքները», —հայտարարեց գեներալ Օսման Նիզամի փաշան»[37]։ Իսկ նավային ցույցից հրաժարվելը Լոնդոնի թուրքական պատվիրակության ղեկավար Ռեշիդ փաշային հիմք տվեց հայտարարելու, որ «տերությունների հարկադրանքը ծովային ցույցով կամ առանց դրա, միևնույնն է, կմնա անհետևանք»[33]։

Ի վերջո, գործն ավարտվեց տերությունների սուտ դիվանագիտական ելույթով։ Հունվարի 17-ին նրանք թուրքական վարչությանը պահանջ ներկայացրին, որպեսզի նա իրենց թողներ Էգեյան կղզիների հետագա վիճակի որոշումը, երաշխավորելով այդ հարցը լուծել առանց սպառնալիք տեղծելու Թուրքիայի անվտանգությանը[39]։ Բայց, նրանց հակասությունները այնքան էին սրվել, որ ի վերջո չկարողացան կոնկրետ որոշում կայացնել։ 1913 թ. մայիսի 30-ին Լոնդոնում կնքված հաշտության պայմանագրում կղզիների հարցը մնաց բաց։ Այն ենթակա էր մեծ տերությունների վճռին։

---

32 Նույն տեղում, էջ 232։
33 Նույնը, էջ 607։
34 Նույն տեղում, էջ 262։
35 Նույն տեղում, էջ 267։
36 Y. H. Bayur, Türk inkılâbı tarihi, cild II, kısım II, Ankara, 1943, s. 235.
37 „Le Temps", 18. I. 1914.
38 «С. Петербургские ведомости», I (14).1.1914.
39 D. D. F, t. V, p. 254—255.

Ընկնելով մեծ տերությունների հովանավորության տակ, էգեյան կղզիները դարձան մանր դրամ՝ նրանց խոշոր քաղաքական պայքարում[40]։ Արտաքինից թվում էր, թե կղզիների խնդրում անմիջականորեն պայքարում են Թուրքիան և Հունաստանը։ Սակայն պայքարը հիմնականում մղվում էր իմպերիալիստական տերությունների միջև, իսկ Թուրքիայի և Հունաստանի շահերը ստորադասվում էին նրանց ընդհանուր քաղաքական նպատակներին։

Էգեյան կղզիների շուրջը վիճաբանությունները բուռն կերպով շարունակվեցին նաև Լոնդոնի հաշտությունը կնքվելուց անմիջապես հետո։ Տերություններից յուրաքանչյուրը համառորեն ու հաստատակամորեն պաշտպանում էր իր շահերը։

Վերջապես, 1913 թ. օգոստոսի 1-ին, ամփոփելով տերությունների տեսակետները, Գրեյը առաջարկեց կղզիների խնդրի հետևյալ լուծումը. Հունաստանին են անցնում հունական բնակչությամբ և հունական զինված ուժերի կողմից գրավված կղզիները, որոնք ապառազմականացվում են։ Հունաստանը Թուրքիային է վերադարձնում Թենեդոսը և Իմբրոսը։ Թուրքիան Լոզանի պայմանագրի II հոդվածը կատարելու դեպքում Իտալիան էվակուացիայի կենթարկի իր զորքերը Դոդեկանեզից և այն կվերադարձնի Թուրքիային։ Այսուհանդերձ, Գրեյի բանաձևում ակնարկվում էր, որ Դոդեկանեզյան կղզիների վերջնական բախտը որոշվելու էր ապագայում։

Գրեյի կատարած առաջարկը ալբանական հարցում Իտալիային արված բացահայտ զիջում էր։ Դրա համաձայն, Ալբանիային պետք է մնային Կորիցան, Ստիլոսը և Սասենո կղզին[41]։ Այսպիսով, զոհարերելով Հյուսիսային էպիրոսի նկատմամբ Հունաստանի պահանջները, Գրեյը փոխզիջման ճանապարհով ձգտում էր թուլացնել Իտալիայի համառությունը կղզիների հարցում։

Սակայն Գրեյի ծրագիրը հաջողություն չունեցավ, իսկ քաղաքական իրադարձությունների փոփոխությունը նոր տեսակետներ էր մտցնում կղզիների խնդրի լուծման բնագավառում։

1913 թ. աշնանը ռուսական կառավարությունը կղզիների հարցում փորձեց համաձայնության գալ Գերմանիայի հետ, միանալով Քիոս և Միթիլեն կղզիները Թուրքիային վերադարձնելու գերմանական կառավարության առաջարկությանը և ցանկանալով դյուրացնել Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնելու ծրագիրը[42]։ Այդպիսով, Քիոսը և Միթիլենը Թուրքիային վերադարձնելու պայմանով ռուսական կառավարությունը հույս ուներ ամրապնդել իր ազդեցությունը Արևմտյան Հայաստանում։ Ուրեմն, Հայկական հարցը որոշակիորեն հանդես էր գալիս որպես մերձավորարևելյան պրոբլեմի բաղկացուցիչ մաս՝ ընդհանուր առմամբ կապված լինելով կղզիների հարցի հետ։

Հունաստանում դրսևորվող գերմանասիրական ձգտումները, որոնք բացահայտ դարձան Կոնստանտինի գահ բարձրանալուց հետո, Գերմանիայում ընկալվում էին զոհունակությամբ։ Այդտեղ արդեն մտածում էին հունա-ռումինա-թուրքական խմբավորում ստեղծելու մասին։ Ուստի, թուրք-հունական տարաձայնությունները վերացնելու համար գերմանական դիվանագիտու-

---

40 Ф. И. Нотович, Дипломатическая борьба в годы первои мировой войны, т. I, М. — Л., 1947, стр. 113.

41 D. D. F., t. VIII, p. 560.

42 Նույն տեղում, էջ 626։

թյունը հանդես եկավ խնդրի լուծման հետևյալ առաջարկով. Իտալիայի օկուպացրած Դոդեկանեզը անցնում է Հունաստանին։ Վերջինս, հօգուտ Թուրքիայի, հրաժարվում է Քիոսից և կամ՝ Միթիլենից[43]։ Ուրեմն, հանուն հույն-գերմանական համաձայնության, Գերմանիան զոհաբերում էր իր դաշնակցի շահերը, որը Հռոմում չէր կարող չընկալվել մեծ դժգոհությամբ։

Կղզիների խնդրի լուծման գործում հակասությունները սուր էին ոչ միայն երկու խմբավորումների, այլև՝ այդ խմբավորումների անգամ տերությունների միջև։ Այդ էր պատճառը, որ 1913 թ. աշնանը կղզիների հարցը սպառնում էր խզում առաջացնել տերությունների միջև։ Մյուս կողմից, այդ հարցում չափազանց լարված իրադրություն էր ստեղծվել Թուրքիայի և Հունաստանի միջև։ Այդպիսով, Արևելքում բորբոքված հարցերից ամենահրատապը այդ ժամանակաշրջանում Էգեյան ծովի կղզիների հարցն էր, որը, Յագովի կարծիքով, հղի էր պատերազմի վտանգով[44]։

1914 թ. հունվարի 24-ին անգլիական կառավարությունը առաջարկեց ի թիվս Թենեդոսի և Իմբրոսի, Թուրքիային վերադարձնել նաև Կաստելլորիզոն։ Խնդիրը ավելի չկնճռոտելու համար Դոդեկանեզի հարցը բաց էր թողնված։ Դրանք իրականացնելու համար Լոնդոնը առաջարկում էր Աթենքում և Կ. Պոլսում կազմակերպել տերությունների ընդհանուր ելույթ[45]։ Սակայն Կենտրոնական տերությունները վճռականապես հրաժարվեցին միանալ անգլիական առաջարկությանը։ Իտալիան նույնիսկ դրդում էր Թուրքիային վերագրավել կղզիները և այդպիսով Եվրոպային կանգնեցնել կատարված փաստի առաջ այնպես, ինչպես ժամանակին կատարվեց Ադրիանոպոլիսը վերագրավելիս[46]։

Թուրքիան, իր հերթին, փորձում էր ետ ստանալ նեղուցների ու Փոքրասիական ափագծի պաշտպանությունը ապահովող կղզիները։

1914 թ. ամռանը ժամանելով Փարիզ, Ջեմալ-փաշան Ֆրանսիական կառավարությանը հավաստիացնում էր, որ եթե վերջինս նպաստի կղզիները Թուրքիային վերադարձնելուն, ապա Թուրքիան պատրաստ է միանալու Անտանտին[47]։

Սակայն, Ֆրանսիայի ու Անգլիայի տեսակետով, այդ պահանջը անիրականալի էր։ Նրանց աջակցությունը Հունաստանին գիտակցական այն քաղաքականության արդյունքն էր, որի նպատակն էր բալկանյան երկրներին հավաքագրել Անտանտի մեջ։ Այդ խմբավորման հիմնական առանձնահատկությունն էր դաշինքը Ռուսաստանի հետ, որը որոշակի չափով նախատեսվում էր իրականացնել ի հաշիվ Թուրքիայի և ոչ թե դաշինք նրա հետ, որը երաշխիքներ էր տալիս ընդդեմ Ռուսաստանի։ Դրանով պետք է բացատրել այն խուսափողական դիրքավորումը, որ Ջեմալ փաշայի հետ բանակցելիս հանդես բերեց Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրությունը[48]։

---

43 Նույն տեղում, հ. 8, էջ 402։

44 Նույն տեղում, փաստաթուղթ № 456, № 482, № 321։

45 Նույն տեղում, հ. 9, էջ 168—169։

46 Международные отношения в эпоху империализма. Серия III. т. I, М.—Л., 1931. стр. 401—402.

47 Джемаль паша, Записки, Тифлис, 1923, стр. 87.

48 В. В. Готлиб, Тайная дипломатия во время первой мировой войны, М., 1960, стр. 49.

Կղզիների խնդրի շուրջը ծավալված դիվանագիտական համառ պայքարը անարդյունք կերպով շարունակվեց ընդհուպ մինչև 1914 թ. օգոստոսը, երբ կղզիների խնդիրը միաձուլվեց այն բոլոր հակասություններին, որոնց լուծման համար իմպերիալիստական տերությունները սանձազերծեցին համաշխարհային պատերազմը։

ЭГЕЙСКИЕ ОСТРОВА И ПОЛИТИКА ИМПЕРИАЛИСТИЧЕСКИХ ДЕРЖАВ (1912—1914)

Г. С. КИЛИМДЖЯН

Резюме

В политике империалистических держав относительно островов Эгейского моря проявились глубокие противоречия. Имело место не только принципиальное расхождение позиций империалистических блоков — Антанты и Тройственного союза — по вопросу о принадлежности Эгейских островов, но и значительные разногласия между странами-участницами внутри каждого блока.

В решении проблемы Эгейских островов, с различных точек зрения, но одинаково пристрастно были заинтересованы все державы, стремившиеся к усилению своего влияния в Восточном Средиземноморье, на Балканах и Ближнем Востоке.

В этом смысле проблема островов и проливов была частью их Балканской и ближневосточной политики, и потому представляет особый интерес.

Антанта, в частности Франция, настойчиво выступала за сохранение островов в составе Греции, оккупировавшей их в период первой Балканской войны. Державы Тройственного союза добивались возвращения островов, расположенных у проливов, а также Хиоса и Митилены Турции.

Попытки разрешить проблему островов путем переговоров закончились безрезультатно, и к началу первой мировой войны их судьба оставалась нерешенной.